



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՎ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

որին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի քարձը նախագահության տակ Կանիրեռում գումարված նախակոպոսական ժողովը, 1956 թվականի մարտի 8-ին, իր և վերջին նիստում, զրադվեց «Քրիստոնեական այլ եկեղեցիներու նետ հարաբերություն մշակելու» հարցով: Եպիսկոպոսական ժողովը, կարծիքների փոխանակությունից հետո, ցանկություն հայտնեց, որ «մեր եկեղեցին ևս մասնակցի զուտ կրոնական բնույր ունեցող համաշխարհային միջեկեղեցական ժողովներուն, Ամենայն Հայոց Կարողիկոսի կողմե նշանակած ներկայացուցիչներով»:

Կանիրեկի նախակոպոսական ժողովը առավ ևս ողջունելի մի ժայլ: Նա զրադվեց Հայ Եկեղեցու գլավանակից Ղպտի, Ասորի, Հարեց և Հնդիկ-Մալարար Արեւելյան եռուց Եկեղեցիներու նետ հարաբերության» հարցով: Եպիսկոպոսական ժողովում որոշվեց, որ մինչև 1960 թվականը «հայապատճառական աշխատանքներ կատարվին սույն եկեղեցիներու նետ համագումար մը ունենալու համար»:

Ուրախությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, Քրիստոնեական սիրո և հարզանի փոխադարձ ըմբռնումով, շատ սիրալիր և

բարեկամական հարաբերություններ է մշակում առհասարակ Օքրողու Եկեղեցու և մասնավորաբար Ռուս Պրավուլավ Եկեղեցու հետ:

Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը, անցյալ տարի արտասահմանում իր կատարած նովվապետական նախապարհություն օրերին, հատկապես Անգլիայում զրտերված ժամանակ, զրադվեց Հայ և Անգլիան Եկեղեցիների փոխարարերության ամրացման, սերտացման խնդրով: Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի այցելությունը Անգլիա մի գեղեցիկ էջ ավելացրեց Հայ և Անգլիան Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների պատմության մեջ: Վեհափառ Հայրապետը լունդոնում, ապրիլի 12—16-ին, Լամբերի պալատում, անձնական հյուրը եղավ Քենսարքերի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն դրկու: Զենքիքի Ֆիշերի: Առաջին անգամն էր Հայ Եկեղեցու պատմության մեջ, որ Ամենայն Հայոց Կարողիկոսը այցելում էր Անգլիա, արժանանալով ջերմ ու սիրալիր ընդունելության:

Հայ Եկեղեցու պատմության հատկապես վերջին 60-ամյակում սկսվել են Հայ և Անգլիան Եկեղեցիների միջև ավելի սիրալիր հարաբերություններ, որոնք այժմ, մեր օրերին, վերածվել են սրտառուց բարեկամության: յ

Հայ Եկեղեցին իր պատմության ոգջ ընթացքում Երիստոնեական Դույր Եկեղեցիների հետ իր հաւաքրեգության հարցերում առաջնորդվել է միշտ Երիստոնեական հզմէ, սիրու և Եղբայրության սկզբունքներով։ Հայ Եկեղեցու համար Եկեղեցական միության, համագործակցության հարցերում աճիախտ օրենք է հանդիսացել «ՄԻՈՒԹԻՒՆ Ի ԿԱՐԵՒԻՐՍ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԱՐԱՅ, ՍԻՐԵԼՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆ» սկզբունքը։ Հայ Եկեղեցին ձգուել է միշտ իրականացած տեսնել Երիստոնեական Եկեղեցիների բաղդալի միասնությունը։ Հայ Եկեղեցին ամեն օր աղորում է «վասն միայնոյ Սուրբ և Առաքելական Եկեղեցայ»։ Այսօր էլ մեր Եկեղեցին, հավատարիմ իր «աստվածաբանական լայնախոնության և Եկեղեցական ազատություն սկզբունքներում վրա, զորս աճիախտ և անփոփոխ պահեց» (Օրմանյան), ձգում է միության ժույր Եկեղեցիների հետ, սակայն ոչ «ռազիս տէր ընդ ծառայի, այլ հաւասար ընդ հաւասարի», ինչպես նշել է Շնորհալին։ Այս ոգով միությունը բարիք միայն կարող է բերել Եկեղեցուն։ «Քրիստոնեական Եկեղեցիների Եղբայրական մերձեցումով և գործակցությամբ, խորհում ենք, թե ավելի զարացրած կիննենք Քրիստոսի Եկեղեցին», — պատգամում է Ամենայն Հայոց Հայրապետը Լոնդոնում, ի պատիվ Իրեն տրված պաշտոնական ընդունելության ընթացքում, Նիկողական միության ակումբում։

* Անզիկան Եկեղեցին և Եկեղեցականությունն ու ժողովուրդը միշտ բարձր են զետեղական Հայ Եկեղեցաւն, «Երան Երիստոնեական խորունկ ոգին, երան համար հարումը Քրիստոսի հավատին և նկարագրի ու հայաձեռնության այն հարուստ և օգուակար հպատար, որը հայերը բերում են հասուրակության, ուր էլ որ գտնվեն», որովհետև նա հանդիսացել է «Արևելյան Երիստոնեության խկությունն ու արտահայտությունը», որ «իր խմասուն նկարագրով... ավանդական քաշքըշտերով չի եղանակի... և ողջամիտ է մեացել ժողովրդյան հետ շփումը չկորսրենելու...», որ դավանաբանական կետերը նվազագույն չափի է վերածել, որ կրօնական պաշտամանց կամայական ծանրություններ

չի բարդում, իրանից դուրս եկողներին չի գրկում փրկուրյունից, որ ինքնատիպ Եկեղեցի է, որ պահվել և զարգացել է ուրիշ Եկեղեցիների ազդեցությունից դուրս, երբեք չի հանաչել նրանց գերիշխանությունը և հավատարմությունն պահպանել է Արևելյան հայնական Երիստոնեության ժառանգությունը, ինչպես որ այն կազմվել էր առաջալներին անմիջապես հաջորդող դարում։

Անցյալ տարի ապրիլի 13-ին կոնդոնում, Քենտրոնական Արքեպիսկոպոսը, ի պատիվ նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետին տված պաշտոնական ընդունելության յամանակ, ողջունելով Վեհափառ Հայրապետի շնորհարեր այցելությունը Անզիկա, ասաց, որ «Հայ Եկեղեցին... եզակի է Երիստոնեական Եկեղեցիների մեջ, ոչ միայն առաջալների կողմից հիմնված լինելու իր իրավունքով, այլ նաև առաջին Եկեղեցին, որ դարձավ Անզային Եկեղեցի, երբ Դ դարի սկզբում Հայաստանի բազավորությունը Երիստոնեությունը նրանց առաջ ուրախ իր պաշտոնական կրոնը... Հայ Եկեղեցին եզակի է իր ցավերով և դժվարություններով, որը պատմությունը պարագրել է այս Եկեղեցուն և Ազգին, եզակի՝ սոսկալի հալածանելություն և գաղթերի իր պատմությամբ, եզակի՝ Եկեղեցու հավատին իր համար հավատարմությամբ և պաշտումով... և եզակի այն իրողությամբ, որ հակառակ հալածանելություն և նեղմտեցնող և խրստացնող ազդեցության, այս Եկեղեցին մնացել է պատամիտ, իր վարդապետական հայացքներով և լայնախոնի՝ ուրիշ Եկեղեցիների հանդիպ իր կեցվածքի մեջ, ինչպես նաև իր ժողովուրդն էլ, ինքնիրեն հայտնաբերել է ուրախ հախածեռնող, բազմակողմանի և մեծապես տաղանդավոր»։

Վեհափառ Հայրապետը Անզիկայում գրտերված միջոցին, ուր էլ որ զետեղ, ուր էլ որ այցելեց, ամեն տեղ ողջունվեց և մեծարվեց ուրախ «Ընդհանրական Հայրապետը Արևելյան Երիստոնեության հին Եկեղեցիներից մեկի, Եկեղեցի՝ որ հաստատվել է Ս. Թաղենու և Ս. Թարբութիմեոս առաջալների բարողությամբ»։

Անգլիկան Եկեղեցու Արտաքին հարաբերությունների Եկեղեցական խորհուրդը, իր 1956 թվականի 18-րդ տեղեկագրում վեճափառ Հայրապետի Անգլիա կատարած այցելուրյան մասին գրել է.

«Ապրիլի 12—16 օրերին Ամենայն Հայոց Կարողիկոս նորին Սրբություն Վազգեն Ա-ր ընդունվեց Լամբերի պալատում որպես Քենարքերի Արքեպիսկոպոսի հյուրը: Բազում դարերից ի վեր ոչ մի Կարողիկոս չի բողել էջմիածինը՝ այցելելու Սփյուտում ցրված իր հոտին, և առաջին անգամն է, որ մի Կարողիկոս այցելում է Անգլիա: Անգլիա իր այցելուրյան օրերին նորին Սրբությունը ներկա եղավ Լամբերի պալատում Նիկահական ակումբի կողմից տրված ընդունելուրյան: Նա ընդունվեց հայ Ռևստմինհաստի Արքայարանում, Քենարքերի Մայր Տաճարում և նեշտում սրբավայրում: Ապրիլի 15-ի կիրակի օրը նորին Սրբությունը պատարագեց Լոնդոնի հայոց Եկեղեցում: Պատարագին ներկա էր Քենարքերի Արքեպիսկոպոսը, որը ողջունի նառ արտասանեց: Սուրբ պատարագի արարողության ժամանակ Կարողիկոսը Քենարքերի Արքեպիսկոպոսին նվիրեց նովիկան խաչ»:

Վեճափառ Հայրապետի այցելուրյունը Անգլիա հանդիսացավ Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև գոյուրյուն ունեցող ավելի հան վարսուն տարիների մեծ բարեկամուրյան վառ ապացույցը:

Կասկած շունենք, որ փոխադարձ հարգանքի և սիրո վրա խարսխված Հայ և Անգլիկան Եկեղեցիների հիմափուրց բարեկամուրյունը կշարունակվի այսուհետեւ ևս՝ հօգուանքու Եկեղեցիների և ժողովուրդների կրթական, Եկեղեցական, մշակուրային և արևտևական կապերի ամրապնդման:

Լոնդոնում Վեճափառ Հայրապետը տեսակցուրյուններ ունեցավ Քենարքերի Արքեպիսկոպոսի հետ, Հայ և Անգլիկան Եկեղեցիների եղբայրական և բարեկամական հարաբերությունների և համագործակցուրյան գործնական հարցերի շուրջ:

Պաշտոնական այդ տեսակցուրյունների ժամանակ Վեճափառ Հայրապետը խոսեց ընդհանրապես Քրիստոնեության և մասնա-

փորապես Հայ Եկեղեցու մեր օրերի վերագրման մասին. «Մենք հավատում ենք, ասաց Վեճափառ Հայրապետը, որ Քրիստոնեությունը առնասարակ և Հայաստանի այցելեցին մասնավորաբար վերածնելով յան մի ուր դարձրջան է որ սկսում են: Մենք է որ մենք՝ նոգեռականներս, այս գիտակցուրյամբ նվիրվենք սուրբ գործին և մոտենանք միմյանց, ավելի արդյունավետ դարձնելու համար մեր աշխատանքը: Քրիստոնեական Եկեղեցիների եղբայրական մերձեցմամբ և գործակցուրյամբ, խորհում ենք, որ էլ ավելի զորացրած կլինենք Քրիստոսի Եկեղեցին»:

Հայ Եկեղեցին միշտ բարեմտուրյամբ է ընդունել Քրիստոնեական Եկեղեցիների միջև համագործակցուրյան և միուրյան առաջարկները: Եվ այսօր, ամեն ժամանակներից ավելի, կենսական անհրաժեշտուրյուն է, որ «Քրիստոսի բազավորուրյան Եկեղեցիները միասին անեն ու վկայուրյունը տան իրենց ուժի, իրենց հավատի սրբության և պաշտամունքի»: Այսօր է մանավանդ, որ միասնական պիտի հնչի Եկեղեցու ձայնը ի պաշտպանություն խաղաղության և մարդկային առաջադիմուրյան: Այս հարցում հույն ողին ունեն Հայ և Անգլիկան Եկեղեցիները: Հայ Եկեղեցին իր ողջ պատմուրյան ընթացքում այն խորունկ համոզումն է ունեցել, որ «Եկեղեցի մը, որքան ալ մեծ ըլլա ան, չի կրնար ներկայացնել ամբողջ Քրիստոնեությունը, և քե յուրաքանչյուր Եկեղեցի առանձին տառնվածք կրնա սխալիլ» (Օրմանյան): Եկեղեցու այն միուրյունը, որին ձըգտել է մեր Եկեղեցին, որի համար նա աշխատում է այսօր էլ, ուրիշ բան չէ, երե ոչ «միուրյուն Եկեղեցիներու միջև հոգեռ հաղորդակցուրյան հիման վրա, իրենց ուրույն դիրքերը փոխադարձաբար հարգելով, իրենց սեփական շրջանակին և սահմաններուն միջ յուրաքանչյուրն ազատուրյուն վայելելով և Քրիստոնեական սիրո ողին տիրապետելով ամենուն»:

Ահա այս ոգով, այս սկզբունքների լույսի տակ, բարեկամական հարաբերություններ են հաստատվել Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև, հարաբերություն, որը շուրջ 50 տա-

րին ի վեր կա արդեն ու իր բարի պտուղներն է տալիս Անգլիկան և Հայրապետական Առաքելական Եկեղեցիների միջև, — նկատում է Վեհափառ Հայրապետը:

Հայ և Անգլիկան Եկեղեցիների հարաբերության զարգացման և ամրապնդման ապահովում կարևոր դեր է կատարել նաև Ս. Երուսաղեմը, Քրիստոնեության այդ մեծագույն սրբավայրը Երուսաղեմի հայոց Առաքելական Ս. Արքովի և Ս. Հակոբյանց վահանի և միաբանության ու Երուսաղեմի Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոսի միջև վաղուց հաստատվել են շատ սիրալիր և բարեկամական հարաբերություններ, «որոնք արդեն աստվածահան մի ավանդություն են դարձած», — նշում է Վեհափառ Հայրապետը: Տարիներով Երուսաղեմի հայոց ժառանգավորաց վարժարանում և Ծննդայարանում դասսավանդել են Անգլիկան Եկեղեցու հոգևորականներ: Երուսաղեմի մեր միաբան Վարդապետներից շատերը իրենց աստվածաբանական ուսումը շարունակել են Անգլիայում, անգլիական աստվածաբանական կողմէննում:

Վեհափառ Հայրապետի Անգլիա այցելությամբ և անձնական ծանորությամբ Հայ և Անգլիկան բույր Եկեղեցիների միջև փոխադարձ հարգանքն ու սերը է՝ լ ավելի պիտի

անեն և Քրիստոնեական մեր եղբայրությունը պիտի դառնա մի ամուր ամրոց», — հայտարաւել է Վեհափառ Հայրապետը Անգլիա այցելության օրերին:

Արտասահմանյան հովվագետական հաճապարհորդությունից Մայր Արքու Ս. էջմիածին վերապառնալուց հետո, Վեհափառ Հայրապետի և Քենտրոնական Արքեպիսկոպուսի միջև կատարվեցին համակագրություններ, որոնք հրատարակվեցին մեր ամսագրի տույն թվականի մայիսի համարում, կոնկրետ հոդի վրա դնելու համար Անգլիայում «փոխադարձ սիր» և համակրանքի պայմաններում ստեղծված փոխըմբռնումը» Հայ և Անգլիկան Եկեղեցիների պետերի միջև:

Անոաշիկա տարվա սկզբներից կսկսվեն Երուսաղեմում Հայ և Անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչների միջև պաշտոնական խորհրդակցություններ, կողմերի երեխական բարձրաստիճան հոգևորական ներկայացուցիչների մասնակցությամբ:

Թո՛ղ ընդմիջու անի, պտղաբերի Հայ և Անգլիկան Եկեղեցիների աւրու միությունը:

Թո՛ղ Տերը զորացնի և պահպանի Քրիստոնեական սիրն և եղբայրության ողին Անգլիկան և Հայ Եկեղեցիների միջև:

